



## Նոր ծառայություն էյչ-էս-Բի-Սի քարտերի համար՝ անհատական ծածկագրի (PIN) փոփոխության հնարավորություն բանկոմատների միջոցով

Հարգելի Հաճախորդ,

Սույնով տեղեկացնում ենք, որ սկսած 02/03/2016թ.-ից՝ Դուք կարող եք փոփոխել Ձեր «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից տրամադրված կրեդիտ /վճարային (Մաստեր Բարտ և ԱրՔա) քարտերի անվտանգության ծածկագրերը (այսուհետ՝ PIN) բանկոմատի միջոցով:

### Ձեր քարտի PIN-ը փոփոխելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

1. Մուտք արեք Ձեր քարտը Բանկի բանկոմատի մեջ: Մուտքագրեք Ձեր քարտի ներկայիս PIN-ը: Վավեր PIN մուտքագրելուց հետո Դուք կուղղորդվեք հիմնական մենյուն պարունակող էջ:
2. Հիմնական մենյուի էջում ընտրեք «Անվտանգության ծածկագրի փոփոխում» ծառայությունը: Մուտքագրեք նոր PIN-ը և սեղմեք «Enter» կոճակը:
3. Հաջորդ էջում Ձեզանից կպահանջվի կրկին մուտքագրել նոր PIN-ը, որից հետո համակարգը կիրականացնի նոր PIN-ի նույնականացումը: Եթե մուտքագրված երկու PIN-երը համընկնեն, ապա Դուք կուղղորդվեք վերջնական էջ, որտեղ Ձեզանից կպահանջվի մուտքագրել Ձեր քարտի ներկայիս PIN-ը, որից հետո PIN-ի փոփոխությունը կկատարվի:

### Կարևոր տեղեկատվություն

- Ձեր կրեդիտ/վճարային քարտի PIN-ը պետք է պարունակի 4 նիշ:
- Անվտանգության նկատառումներից ելնելով և զեղծարարություններից պաշտպանվելու համար խուսափեք կրկնվող նիշերի (օրինակ՝ 2222, 1111 և այլն), հաջորդական նիշերի (օրինակ՝ 1234, 6543) կամ հեշտ կռահելի անձնական տվյալներ (օրինակ՝ ծննդյան տարեթիվ, հեռախոսահամար) օգտագործելուց:

Հուսով ենք այս նոր ծառայությունը Ձեր ամենօրյա բանկային գործարքները կդարձնի առավել հարմարավետ:

Եթե Դուք ունեք հարցեր կամ Ձեր քարտի PIN-ը փոփոխելու համար աջակցության կարիք ունեք, խնդրում ենք այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք մեր Հեռախոսային կենտրոն՝ **+374 60 655000** հեռախոսահամարով:

Հարգանքով՝  
«էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Թարմացվել է՝ 15/01/2019 15:00